Հավելված N 3
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 3-ի N 1332 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

1. Ջրօգտագործման թույլտվություն ունեցող իրավաբանական անձի վերակազմակերպման (բացառությամբ իրավաբանական անձի առանձնացման կամ բաժանման դեպքերում) կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում ջրօգտագործողը պարտավոր է, այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալուց հետո դիմել լիազոր մարմին ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպման համար՝ դիմումին կցելով ջրօգտագործման թույլտվության բնօրինակը և տեղեկություններ պետական գրանցման համարի վերաբերյալ:

2. Իրավաբանական անձի առանձնացման կամ բաժանման ձևով վերակազմակերպման ժամանակ ջրօգտագործման թույլտվությունը տրվում է՝

1) այդ իրավաբանական անձից առանձնացած իրավահաջորդին (իրավահաջորդներին) միայն ջրօգտագործման թույլտվության տրամադրման կարգին համապատասխան,

2) բաժանված իրավաբանական անձանց միայն ջրօգտագործման թույլտվության տրամադրման կարգին համապատասխան:

3. Ջրօգտագործման թույլտվություն ունեցող անհատ ձեռնարկատիրոջ կամ ֆիզիկական անձի անվան կամ բնակության վայրի փոփոխման դեպքում ջրօգտագործողը պարտավոր է, այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից հետո դիմել լիազոր մարմին ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպման համար՝ դիմումին կցելով ջրօգտագործման թույլտվության բնօրինակը և անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ տեղեկություններ պետական հաշվառման համարի վերաբերյալ, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:

4. Ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպումն իրականացվում է ջրօգտագործողի դիմումը սույն կարգի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված փաստաթղթերով Լիազոր մարմին մուտքագրելու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

5. Ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպման մասին որոշումն ընդունելուց հետո լիազոր մարմինն այդ մասին պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին և հրավիրում իր կողմից վավերացնելու վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվությունը:

6. Լիազոր մարմնի կողմից վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվությունը վավերացնելուց հետո պատշաճ ծանուցվում է ջրօգտագործողին 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարելու պետական տուրքը սահմանված կարգով ու չափով:

7. Լիազոր մարմինը գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի՝ սահմանված ժամկետում վճարված լինելու մասին և հրավիրում ջրօգտագործողին վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվության իր օրինակը ստանալու համար:

8. Վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվության ժամկետ սահմանվում է գործող ջրօգտագործման թույլտվության նույն ժամկետը:

9. Վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվությունը կազմվում է 2 օրինակից, որից 1 օրինակը տրվում է ջրօգտագործողին, իսկ մյուս օրինակը պահվում է լիազոր մարմնում:

10. Վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվությունն ունենում է ծածկագիր՝ որտեղ նշվում է ջրավազանային կառավարման տարածքը, գետավազանը/գետը, ջրառը, ջրահեռացումը, ջրային ռեսուրսը և տրվող ջրօգտագործման թույլտվության կարգավիճակը՝ համաձայն Ձև N 3-ի:

11. Ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմինը վերաձևակերպված ջրօգտագործման թույլտվությունը և դրան կից պայմանները գրանցում է պետական ջրային կադաստրում:

12. Վերաձևակերպման պահանջի ի հայտ գալու դեպքում համապատասխան փաստաթղթերը 15 աշխատանքային օրյա ժամկետում չներկայացնելու դեպքում

ջրօգտագործման թույլտվությունը չի վերաձևակերպվում և գործող ջրօգտագործման թույլտվությունը ճանաչվում է ուժը կորցրած:

13. Ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպման ժամանակ լիազոր մարմինը պատշաճ ձևով 2 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է ջրօգտագործողին ջրօգտագործման թույլտվության փաթեթում առկա թերի կամ անճշտությունների վերացման համար անհրաժեշտ փաստաթղթերի 15 աշխատանքային օրվա ընթացքում համալրման մասին: Այդ ընթացքում դիմումի քննարկման գործընթացի ժամկետը կասեցվում է, մինչև թերի փաստաթղթերի համալրման օրը:

14. Եթե ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպման պահին առկա են օրենսգրքով սահմանված ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կամ վերանայման հիմքեր, ապա ջրօգտագործողին տրամադրվում է երկարաձգված կամ վերանայված ջրօգտագործման թույլտվություն:

15. Եթե ջրօգտագործման թույլտվության վերաձևակերպման պահին առկա են օրենքով սահմանված ջրօգտագործման թույլտվության և երկարաձգման, և վերանայման հիմքեր, ապա ջրօգտագործողին տրամադրվում է երկարաձգված և վերանայված ջրօգտագործման թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ